ՏՆԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (IN-HOME SUPPORTIVE SERVICES, IHSS) ԾՐԱԳԻՐ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻ ԱՆԴԱՄԱԳՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻ ՀԱՄԱՐԸ՝

ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻ ԱՆՈՒՆԸ (ԱՆՈՒՆ, ՄԻՋԻՆ ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ)

1. Ես հաճախել եմ պահանջվող մատակարարողների անդամագրման կողմնորոշումը IHSS մատակարարողների համար և հասկանում եմ և համաձայն եմ հետևյալի հետ՝
   - Ինձ տվել են տեղեկություններ IHSS ծրագրում մատակարարող լինելու մասին:
   - Ինձ տեղեկացրել են իմ պարտականությունների մասին որպես IHSS մատակարարող:
   - Ինձ տեղեկացրել են IHSS ծրագրում խարդախություն գործելու հետևանքների մասին:
   - Ինձ տվել են Medi-Cal խարդախության թեժ գծի անվճար 1-800-822-6222 հեռախոսահամարը և http://www.dhcs.ca.gov/individuals/Pages/StopMedi-CalFraud.aspx կայքը՝ IHSS ծրագրում խարդախությունների և չարաշահումների դեպքերի մասին զեկուցելու համար:

2. Ես հասկանում եմ հետևյալը.
   - Իմ ժամանակացույցում ես կարող եմ նշել միայն այն ժամերը, որոնց ընթացքում ես աշխատել եմ ստացողին հաստատված ծառայություններ տրամադրելու համար:
   - Ստորագրելով իմ ժամանակացույցը՝ ես հավաստիացնում եմ, որ այդտեղ նշված տեղեկությունները ճիշտ են և ստույգ:
   - Ես պետք է հանձնեմ իմ ժամանակացույցը (իմ և ստացողի կողմից ստորագրված) յուրաքանչյուր վճարման ժամանակահատվածի ավարտից երկու շաբաթվա ընթացքում: Եթե ես ժամանակին եմ ներկայացնում իմ ժամանակացույցը, և այն ճիշտ է լրացված, ապա ես կվճարվեմ ժամանակացույցների մշակման հիմնարկությունում դրա ստացման ամսաթվից հետո 10 օրվա ընթացքում: Եթե ես չներկայացնեմ իմ ժամանակացույցը վճարման ժամանակաշրջանի ավարտից հետո երկու շաբաթվա ընթացքում, իմ վճարումը կարող է հետաձգվել:
   - Եթե ինձ դատապարտեն իմ ժամանակացույցում կեղծ տեղեկություններ տալու համար, ապա որևէ ծրագրի կամքբեական տուգանքների հետ մեկտեղ ես ստիպված կլինեմ հետ վճարել որևէ գերվճարում, որը ստացել եմ, ինչպես նաև վճարել քաղաքացիական տուգանքներ, որոնք կկազմեն առնվազն $500 և ոչ ավել քան $1000 յուրաքանչյուր կեղծիքի համար:

3. Ես տեղեկություն եմ ստացել առավելագույն շաբաթական ժամվա և ճամփորդության ժամանակի պահանջների մասին: Այդ տեղեկությունը ներառում էր հետևյալ կետերը.

Վճարում արտաժամյա աշխատանքի համար

- Սկսած 2016 թ. փետրվարի 1-ից՝ IHSS մատակարարողները վճարվելու են արտաժամյա աշխատանքի համար (սովորական դրույքաչափից մեկ ու կես անգամ ավել), երբ նրանք աշխատում են ավելի քան 40 ժամ աշխատանքային շաբաթում: Աշխատանքային շաբաթը սկսում է 12:00 a.m.-ից (կեսգիշեր) կիրակի ու ավարտվում է 11:59 pm-ին հաջորդ շաբաթ օրը:

ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻ ՀԱՄԱՐԸ՝

Ի՞նչ է նշանակում իմ ստացողի «հաստատված շաբաթական ժամեր»:

Իմ ստացողի հաստատված շաբաթական ժամերը նշանակում են իր ամսական հաստատված ժամերը՝ բաժանված չորսի: Օրինակ, եթե իմ ստացողի համար հաստատվել է ամսական 125 ժամ ծառայություն, ապա իմ ստացողի հաստատված շաբաթական ժամերը կազմում են 125 ÷ 4 = 31 ժամ, 15 րոպե:

Առավելագույն շաբաթական ժամեր

Առավելագույն շաբաթական ժամաքանակը մի ուղեցույց է, որը տեղեկացնում է ինձ առավելագույն ժամաքանակի մասին, որը ես կարող եմ աշխատել մեկ աշխատաքային շաբաթում, որպեսզի իմ ստացողը կարողանա հաշվարկել իր ծառայության ժամերը մեկ ամսում՝ համոզվելու համար, որ նա ստանում է իր ամսական ծառայության բոլոր ժամերը:

- Եթե ես աշխատում եմ միայն մեկ ստացողի համար, ապա առավելագույն ժամերը, որոնք ես կարող եմ աշխատել մեկ աշխատաքային շաբաթում, կազմում են իմ ստացողի ամսական հաստատված ժամերը՝ բաժանած 4-ի: Սակայն, քանի որ ամիսների մեծ մասը 4 շաբաթից մի քիչ ավել է, ես կհամագործակցեմ իմ ստացողի հետ, որպեսզի բաշխենք իր ժամերն ամբողջ ամսվա ընթացքում՝ համոզվելու համար, որ նա ծառայության բավական ժամեր ունի ամսվա վերջում:

  Օրինակ. դեկտեմբեր ամիսն ունի 31 օր: Եթե ես աշխատում եմ միայն մեկ ստացողի համար, ու նա ստանում է ամսական 100 հաստատված ժամ, ապա իմ առավելագույն շաբաթական ժամերը կազմում են 25 ժամ (100 ամսական հաստատված ժամեր՝ բաժանված 4-ի): Սակայն քանի որ դեկտեմբերն իրականում բաղկացած է 4½ շաբաթից, իմ ստացողը պետք է որոշի, թե որքան ժամեր է ցանկանում պահել առաջին չորս շաբաթից, որպեսզի բավական ժամեր ունենա ամսվա վերջին մի քանի օրերի համար: Իմ ստացողը կարող է, օրինակ, խնդրել, որ ես աշխատեմ 22 ժամ դեկտեմբերի առաջին չորս շաբաթներից յուրաքանչյուրի ընթացքում, ինչի հետևանքով նրան կմնա 12 հաստատված ծառայության ժամ ամսվա վերջին օրերի համար (22 X 4 = 88 ժամ, 88 ժամ + 12 ժամ = 100 ժամ):

- Եթե ես աշխատում եմ միայն մեկ ստացողի համար, և նա ունի այլ մատակարարողներ, ապա իմ ստացողը պետք է ինձ ու այլ մատակարարողների համար ժամանակացույց ստեղծի՝ որոշելու համար, որքան ժամ է մեզանից յուրաքանչյուրն աշխատելու: Իմ ստացողը պետք է բաժանի իր ընդհանուր հաստատված ժամերն իր մատակարարողների միջև այնպես, ինչպես ինքը նպատակահարմար է գտնում:

- Եթե ես աշխատում եմ մեկից ավել ստացողների համար, ապա աշխատանքային շաբաթում իմ հայցված առավելագույն ժամաքանակը միասնաբար բոլոր ստացողների համար իմ աշխատած ժամանակի համար պետք է կազմի 66 ժամ: **Իմ ստացողներից յուրաքանչյուրը պետք է ինձ համար ժամանակացույց կազմի՝ որոշելու համար, թե քանի ժամ եմ ես աշխատելու նրանցից յուրաքանչյուրի համար, որպեսզի ես համոզվեմ, որ չեմ աշխատում շաբաթական 66 ժամից ավել**:

Շաբաթական իմ աշխատած ժամաքանակի փոփոխություն. ինչ կարող են և չեն կարող անել իմ ստացողները

Ժամերի փոփոխում

- Եթե իմ ստացողն ունի մեկ կամ ավելի այլ մատակարարողներ, ես կարող եմ «փոխել» որոշ ժամեր մեկ այլ մատակարարողի հետ տվյալ աշխատանքային շաբաթում, որպեսզի ստացողը

ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻ ՀԱՄԱՐԸ՝

ստանա շաբաթվա ընթացքում իրեն հասանելիք բոլոր ժամերը: Սա նշանակում է, որ ստացողի մեկ այլ մատակարարող կարող է աշխատել իմ ժամերի փոխարեն, իսկ ես կաշխատեմ իր ժամերի փոխարեն տվյալ շաբաթվա ընթացքում: Եթե ոչ մի մատակարարող չի գերազանցում իմ ստացողի շաբաթական հաստատված ժամերը, ապա սա խախտում չի համարվի, նույնիսկ եթե այլ մատակարարողը սովորաբար աշխատում է արտաժամյա, իսկ ես՝ ոչ (այս մեկ շաբաթվա ընթացքում ես արտաժամյա աշխատանք կունենամ):

*Եթե ինձ խնդրում են աշխատել **իմ** առավելագույն շաբաթական ժամերից ավել.*

- Եթե ես աշխատում եմ մեկից ավել ստացողների համար, իմ ստացողները <u>չեն կարող</u> խնդրել ինձ աշխատել իմ 66 առավելագույն շաբաթական ժամերից ավել: Եթե իմ ստացողը <u>ցանկանում</u> է, որ ես ավել ժամեր աշխատեմ, իսկ դա անելով՝ ես կգերազանցեմ իմ 66 ժամը, ապա նա պետք է մեկ այլ IHSS մատակարարող գտնի այդ լրացուցիչ ժամերի համար:

- Եթե ես աշխատում եմ միայն մեկ ստացողի համար, իմ ստացողը <u>կարող է</u> խնդրել ինձ աշխատել իմ առավելագույն շաբաթական ժամերից ավել: Այդ դեպքում ես պետք է համոզվեմ, որ այդ լրացուցիչ ժամերի հաշվին ավելի քիչ ժամ եմ աշխատելու ամսվա մեկ այլ շաբաթվա ընթացում, որպեսզի չգերազանցեմ իմ ստացողի ամսական հաստատված ժամերը:

*Եթե ինձ խնդրում են աշխատել **իմ ստացողի** առավելագույն շաբաթական ժամերից ավել.*

- Ստացողը <u>կարող է</u> թույլատրել ինձ աշխատել իր շաբաթական հաստատված ժամերից ավել, առանց վարչաշրջանից հավանություն խնդրելու, եթե այդ թույլտվության հետևանքով ես չեմ աշխատում՝
  - Ավելի քան 40 ժամ իր համար աշխատանքային շաբաթում, երբ նա ունի հաստատված 40 ժամ կամ ավելի քիչ մեկ աշխատանքային շաբաթում, կամ
  - Ավելի արտաժամյա ժամեր մեկ ամսում, քան ես սովորաբար աշխատում եմ՝ հիմնվելով ընդհանուր արտաժամյա քանակի վրա իմ բոլոր ստացողների համար:

- Եթե իմ ստացողը ստանում է վարչաշրջանի հավանությունը, նա <u>կարող է</u> թույլ տալ ինձ աշխատել իր շաբաթական հաստատված ժամերից ավել, նույնիսկ եթե դա չի համապատասխանում վերոնշյալ չափանիշներին: Իմ ստացողը կարող է հավանություն խնդրել վարչաշրջանից իմ աշխատած լրացուցիչ ժամերից հետո կամ առաջ:

Ճամփորդության ժամանակի սահմանափակում

- Նույնպես սկսած 2016 թ. փետրվարի 1-ից՝ ճամփորդության համար ինձ թույլատրելի առավելագույն ժամանակը կկազմի յոթ ժամ մեկ աշխատանքային շաբաթում: Ճամփորդության ժամանակ նշանակում է այն ժամանակը, որն ինձ ահրաժեշտ էուղղակիորեն հաստատված ծառայությունների մեկ ստացողից դեպի հաստատված ծառայությունների մյուս ստացողը նույն աշխատանքային օրը ճամփորդելու համար:
- Ճամփորդության ժամանակը <u>չի</u> հաշվարկվելու որպես ձեր աշխատանքային շաբաթում թույլատրելի առավելագույն շաբաթական ժամերի մի մաս:
- Ճամփորդության ժամանակը, որը գոյանում է աշխատանքային շաբաթում 40 ժամից ավել աշխատելուց հետո, վճարվելու է որպես արտաժամյա աշխատանք՝ դրույքաչափից մեկ ու կես անգամ ավել:

ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻ ՀԱՄԱՐԸ՝

Խախտումներ աշխատաքային շաբաթվա և ճամփորդության ժամանակի սահմանափակումները գերազանցելու համար

- Սկսած 2016 թ. մայիսի 1-ից՝ եթե ես ժամանակացույց եմ ներկայացնում՝ զեկուցելով առավելագույն շաբաթական ժամերի կամ ճամփորդության ժամանակի սահմանափակումները գերազանցող ժամեր, ես խախտում կստանամ:
- Ամեն անգամ հետևյալից որևէ մեկն անելիս, ես խախտում կստանամ՝
  - Ես աշխատում եմ 40 ժամից ավել աշխատանքային շաբաթում ստացողի համար, երբ այդ ստացողը վարչաշրջանից հավանություն չի ստացել (երբ ստացողի համար հաստատվել է 40 ժամ կամ ավելի քիչ աշխատանքային շաբաթում), կամ
  - Ես աշխատում եմ ավելի շատ ժամեր, քան իմ ստացողի համար հաստատվել է աշխատանքային շաբաթում՝ առանց վարչաշրջանի հավանության, և դրա հետևանքով ես ավելի շատ արտաժամյա աշխատանք եմ կատարում ամսվա ընթացքում, քան սովորաբար կանեի, կամ
  - Ես աշխատում եմ մի քանի ստացողների համար, ու ես աշխատում եմ ավելի քան 66 ժամ մեկ աշխատանքային շաբաթում, կամ
  - Ես հայցում եմ ավելի քան յոթ ժամ ճամփորդության ժամանակի համար աշխատանքային շաբաթում:
- Եթե տվյալ ամսվա ընացքում ես ստանամ մեկ խախտումից ավել, դա կհաշվարկվի որպես միայն մեկ խախտում:

Իմ ստացված յուրաքանչյուր խախտման համար լինելու են որոշակի հետևանքներ.

Առաջին խախտում	• Իմ ստացող(ներ)ը և ես կստանանք խախտման մասին ծանուցում և բողոքարկելու իրավունքների մասին տեղեկություններ:
Երկրորդ խախտում	• Իմ ստացող(ներ)ը և ես կստանանք երկրորդ խախտման մասին ծանուցում և բողոքարկելու իրավունքների մասին տեղեկություններ, ու ես կարող եմ անցնել մեկանգամյա ուսուցում աշխատանքային շաբաթվա ու ճամփորդության ժամանակի սահմանափակումների մասին: Եթե ես անցնեմ այս ուսուցումը, ես չեմ ստանա երկրորդ խախտումը: Սակայն <u>եթե ես որոշեմ չանցնել ուսուցումն</u> իմ ծանուցման ամսաթվից 14 օրացուցային օրվա ընթացքում, ես <u>կստանամ</u> երկրորդ խախտումը:
Երրորդ խախտում	• Իմ ստացող(ներ)ը և ես կստանանք երրորդ խախտման մասին ծանուցում և բողոքարկելու իրավունքների մասին տեղեկություններ: • Ես <u>կհեռացվեմ</u> IHSS ծրագրի մատակարարողի աշխատանքից <u>երեք ամսով</u>:
Չորրորդ խախտում	• Իմ ստացող(ներ)ը և ես կստանանք չորրորդ խախտման մասին ծանուցում և բողոքարկելու իրավունքների մասին տեղեկություններ: • Ես <u>կազատվեմ</u> IHSS ծրագրի մատակարարողի աշխատանքից <u>մեկ տարով</u>:

ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻ ՀԱՄԱՐԸ՝

- Երբ ես խախտում եմ ստանում, այդ խախտումը մնում է իմ արձանագրություններում: Սակայն, եթե մեկ տարուց հետո ես այլ խախտումներ չեմ ստանում, ապա իմ ստացված խախտումների քանակը կնվազեցվի մեկով: Եթե ես չեմ ստանում լրացուցիչ խախտումներ, ապա իմ վերջին խախտումից հետո յուրաքանչյուր տարի իմ խախտումների քանակը կնվազեցվի մեկով:
- Եթե ես ստանամ չորրորդ խախտումը և ազատվեմ մատակարարողի աշխատանքից մեկ տարով, ապա տարվա ավարտից հետո, երբ ես կրկին դիմեմ IHSS մատակարարող լինելու համար, իմ խախտումների քանակը կզրոյացվի:
- Եթե ես ազատվում եմ մատակարարողի աշխատանքից մի քանի խախտումներ ստանալու համար, ապա մեկ տարվա ազատման ժամկետը լրանալուց հետո, ես կարող եմ կրկին դիմել IHSS մատակարարող լինելու համար ու պետք է կրկին լրացնեմ մատակարարողի անդամագրման բոլոր պահանջները, ներառյալ՝ կենսագրական տվյալների ստուգում, մատակարարողի կողմնորոշում ու այլ պահանջվող ձևերի լրացում, նախքան ինձ նորից աշխատանքի կվերցնեն:

4. Ես հասկանում եմ, որ ինձանից պահանջվում է լրացնել Զբաղվածության և իրավասության ստուգման ձևը (I-9 ձևը), որը ստացողը պահում է իր ֆայլերում: Այդ ձևը հաստատում է, որ ես օրինական իրավունք ունեմ աշխատելու Միացյալ Նահանգներում:
5. Ես հասկանում եմ, որ ես կարող եմ նաև ներկայացնել Աշխատողի պահումների հատկացման վկայագրման ձևը (W-4 ձևը)՝ դաշնային եկամտահարկ պահելու խնդրանքով և/կամ Կալիֆորնիայի Աշխատողի պահումների հատկացման վկայագրման ձևը (DE 4 ձևը) `իմ աշխատավարձից նահանգային եկամտահարկ պահելու խնդրանքով: Ես հասկանում եմ, որ եթե ես չներկայացնեմ W-4 և/կամ DE 4 ձևերը, ապա դաշնային և նահանգային հարկեր չեն պահվի իմ աշխատավարձից:
6. Ես հասկանում եմ, որ հաստատված IHSS ծառայությունները չեն կարող իրականացվել այն ժամանակ, երբ ստացողը բացակայում է տնից, բացի այն դեպքերից, երբ իմ ստացողը համաձայնություն է ստանում իր սոցիալական աշխատողից այդպիսի ծառայությունների վերաբերյալ:
7. Ես հասկանում եմ, որ ապագայում ես կստանամ IHSS ծրագրի Մատակարարողի ծանուցագիր ստացողի հաստատված ժամերի ու ծառայությունների մասին (SOC 2271), որում կլինի իմ ստացող(ներ)ի անունները և այն ծառայությունների թվարկումը, որոնք ես լիազորված եմ տրամադրել յուրաքանչյուր ստացողին, որին ծառայություններ եմ մատուցում:
8. Ես կհամագործակցեմ նահանգային կամ վարչաշրջանի անձնակազմի հետ, որպեսզի տրամադրեմ պահանջվող տեղեկությունները՝ կապված ծառայություններ ստացողի IHSS գործի գնահատման հետ:

ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻ ՀԱՄԱՐԸ՝

ԵՍ ՀԱՍԿԱՆՈՒՄ ԵՄ IHSS ԾՐԱԳՐԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ԲԱՑԱՏՐՎԵԼ ԵՆ ԻՆՁ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԿԱՄ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՏՐՎԵԼ ԵՆ ԻՆՁ ՎԱՐՉԱՇՐՋԱՆԻ IHSS ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿՈՂՄԻՑ: ԵՍ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՄ ՎԱՐՉԱՇՐՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆԸ ՀԵՏԵՎԵԼՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ: ԵՍ ՀԱՍԿԱՆՈՒՄ ԵՄ, ՈՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՉՀԵՏԵՎԵԼԸ ԿԱՐՈՂ Է ԶՐԿԵԼ ԻՆՁ IHSS ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ:

IHSS ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՄՍԱԹԻՎ

ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻ ԱՆՈՒՆԸ (ԱՆՈՒՆ, ՄԻՋԻՆ ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ)